ԱԼՖԱ ՖԱՐՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ

ՇԱԽՄԱՏԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԹԻՄԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐ

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. **ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ**

   Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ

2. **ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ**

   Ալֆա Ֆարմ ՓԲԸ

3. **ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ**

   ՇԱԽՄԱՏԻ ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԹԻՄԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ **ԵՐՐՈՐԴ** փուլը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում /ք.Երևան, Շևչենկո 34/:

4. **ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

   Մրցաշարի երրորդ փուլը տեղի կունենա 2024 թվականի դեկտեմբերի 21-ին, ժամը 11:00-ին:

21 դեկտեմբերի	11:00	բացման արարողություն,
21 դեկտեմբերի	11:15	1-ին տուր,
21 դեկտեմբերի	11:45	2-րդ տուր,
21 դեկտեմբերի	12:15	3-րդ տուր,
21 դեկտեմբերի	12:45	4-րդ տուր,
21 դեկտեմբերի	13:15	5-րդ տուր,
21 դեկտեմբերի	13:45	6-րդ տուր,
21 դեկտեմբերի	14:15	7-րդ տուր,
21 դեկտեմբերի	14:45	Ընդմիջում,
21 դեկտեմբերի	15:15	«ՍուպերԳավաթ»,
21 դեկտեմբերի	16:00	փակման արարողություն:

5. **ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

   Մրցաշարը կանցկացվի 2 խմբով՝ Ա և Բ :

   Մրցաշարերի 3 փուլերի հաղթող թիմերը խաղում են միմյանց հետ «ՍուպերԳավաթ»-ում:

   Ա մրցաշարին կարող են մասնակցել 1 խաղացող մինչև 2200 և՛ ազգային, և՛ միջազգային վարկանիշ ունեցող և 3 խաղացող 2000-ից ցածր և՛ ազգային, և՛ միջազգային վարկանիշ ունեցող միայն չափահաս շախմատիստները /2024 թվականի սեպտեմբերի 1 դրությամբ/:

   Բ մրցաշարին կարող են մասնակցել 1 խաղացող մինչև 2200 և՛ ազգային, և՛ միջազգային վարկանիշ ունեցող և 3 խաղացող 2000-ից ցածր և՛ ազգային, և՛ միջազգային վարկանիշ ունեցող մինչև 18 տարեկան շախմատիստները /2024 թվականի սեպտեմբերի 1 ի դրությամբ/:

- Եթե պահեստային խաղացողի վարկանիշը գերազանցում է 2000-ը, նա միայն կարող է փոխարինել այն մասնակցին, ով ունի 2000-ից բարձր վարկանիշ: Իսկ եթե պահեստային խաղացողը ունի 2000-ից ցածր վարկանիշ, ապա նա կարող է փոխարինել բոլոր խաղացողներին:
- Մասնակիցների թե՛ ազգային, թե՛ միջազգային վարկանիշները չպետք է գերազանցի վերը նշված վարկանիշը:

6. ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ

Ա ՄՐՑԱՇԱՐԻ 3 փուլերի արդյունքում հաղթող թիմի համար՝ 1 000 000 ՀՀ դրամ:

Բ ՄՐՑԱՇԱՐԻ 3 փուլերի արդյունքում հաղթող թիմի համար՝ անլար ականջակալ:

«ՍուպերԳավաթ»-ի հաղթող՝ Հյուրասիրություն Ռեստորանում:

Մրցաշարերի յուրքանաչյուր փուլի համար նախատեսված են հետևյալ մրցանակները.

Ա մրցաշար		
Հիմնական մրցանակներ	**I**	**Հանգիստ Հայաստանի հանգստյան վայրերից մեկում**
	II	**Անլար ականջակալ**
	III	**Հայաստանի ժամանցի վայրերից մեկի սերտիֆիկատ**
Հատուկ մրցանակներ. լավագույն արդյունք ցույց տված մասնակից	1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/	**«Նոբլեր» հայկական արտադրության կոշիկի բրենդի սերտիֆիկատ**
	Կին մասնակից /առնվազն 4 խաղ խաղալու դեպքում/	**Կոսմետիկ փաթեթ**

Բ մրցաշար		
Հիմնական մրցանակներ	**I**	**Հայաստանի ժամանցի վայրերից մեկի սերտիֆիկատ**
	II	**Թատրոնի տոմսեր**
	III	**Կինոդիտման տոմսեր**
Հատուկ մրցանակներ. լավագույն արդյունք ցույց տված մասնակից	1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ խաղատախտակ /առնվազն 5 խաղ խաղալու դեպքում/	**Chessify ծրագրի սերտիֆիկատ**
	Աղջիկ մասնակից /առնվազն 4 խաղ խաղալու դեպքում/	**Խնամքի միջոցներ**

7. ՄՐՑԱԿԱՐԳ

7.1 Մրցաշարերը կանցկացվեն թիմային հաշվարկով՝ 4 խաղատախտակով (ցանկության դեպքում + 1 պահեստային խաղացող): Այն խաղացողները, ովքեր մեկ կամ ավելի խաղ խաղացել են որևէ թիմի կազմում, իրավունք չունեն խաղալու այլ թիմի կազմում հաջորդ փուլերի ընթացքում:

7.2 Մրցաշարերը կանցկացվի ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 6-7 խաղափուլով /կախված մասնակից թիմերի քանակից/:

7.3 Յուրաքանչյուր մրցախաղում թիմային հաղթանակը գնահատվում է 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր: Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում,

ա/ թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարը,

բ/ թիմերի միջև անհատական հանդիպման արդյունքը,

գ/ ըստ խաղատախտակների վրա ցույց տված արդյունքի (1, 2, 3, 4 խաղատախտակներ):

Եթե այդ ցուցանիշն էլ է հավասար, ապա անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով յուրաքանչյուր խաղացողին տրվում է 5-ական րոպե):

7.4 Եթե խաղատախտակների վրա 2 և ավելի խաղացողներ ձեռք են բերել հավասար միավորներ, ապա որպես լրացուցիչ ցուցանիշ հաշվի է առնվելու իրենց հակառակորդների միջին գործակիցները:
7.5 Ընդհանուր ակումբային մրցաշարի հաղթողը կորոշվի 3 մրցաշարերից 2-ում ցույց տված լավագույն արդյունքների հանրագումարով: Հաշվարկային աղյուսակը ունի հետևյալ տեսքը.

Հաշվարկ՝

- I տեղ – 100 միավոր
- II տեղ – 70 միավոր
- III տեղ – 50 միավոր
- IV տեղ – 20 միավոր
- V տեղ – 10 միավոր

8. ԺԱՄԱԿԱՐԳ

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (2 վայրկյան հավելումով՝ յուրաքանչյուր քայլին, սկսած առաջին քայլից):

9. ՄՈՒՏՔԱՎՃԱՐ

Ա մրցաշարի յուրաքանչյուր փուլի մասնակցության վճարը յուրաքանչյուր թիմի համար կազմում է 30000 ՀՀ դրամ:

Բ մրցաշարի յուրաքանչյուր փուլի մասնակցության վճարը յուրաքանչյուր թիմի համար կազմում է 25000 ՀՀ դրամ:

Մրցաշարի կայքէջում http://tournaments.chessacademy.am/?lang=am անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:

Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել «Շախմատի ակադեմիայի ակումբ»-ի հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ

Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/հ՝ 1570091773770100

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել **թիմի անունը, կոնտակտային հեռախոսահամար, մասնակցության վճար**:

10. ԳՐԱՆՑՈՒՄ

Կանոնադրությանը կցված հայտը լրացված վիճակում կարող եք ուղարկել info@chessacademy.am էլեկտրոնային հասցեին: **ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ**

Հեռ՝ +374 10 448473/79 Էլ. փոստ՝ info@chessacademy.am